# ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ:



## ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ:

### Քայլ 1. Պատրաստեք հնարավոր հարցերի պատասխանները:

- Նախապես որոշեք՝ ինչ ծավալով պետք է սովորի երեխան, որպեսզի հասկանա թեման և արդյունավետորեն հետևի կանխարգելիչ միջոցառումներին։
- Ուսումնասիրեք թեման ինքներդ, ստուգեք փաստերը, գրեք պարզ և մատչելի բացատրություններ։
- Ստուգեք բոլոր տեղեկությունները պաշտոնական և վստահելի աղբյուրներից (ԱՀԿ, Առողջապահության ազգային ինստիտուտներ)։



ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ:

## Քայլ 2. Լսեք

- Թող երեխան նախ պատմի այն մասին, թե ինչ է լսել ուսուցիչներից կամ ընկերներից, ինչն է նրան անհանգստացնում, ինչից է վախենում։

- Պահպանեք հանգստություն և խոսեք հանգիստ, քաջալերող տոնով։



ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ։

## Քայլ 3. Ճշգրտեք գիտելիքները

- Վստահ եղեք, որ պատասխանել եք բոլոր հարցերին, բայց հարմարեցրեք պատասխանները երեխայի տարիքին համապատասխան։

- Խուսափեք ենթադրություններից, դավադրության տեսություններից և ավելորդ մանրամասներից, դրանք կարող են շփոթեցնել կամ վախեցնել։



# ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ:

## Քայլ 4. Ցույց տվեք ձեր օրինակի վրա

- Աշխատեք զերծ մնալ թեմայի վրա գերկենտրոնացումից. վիրուսի մասին լուրերի մշտական քննարկումը տագնապի մթնոլորտ է ստեղծում:

- Միասին պահպանեք հիգիենայի կանոնները՝ հետևելով մաքրությանը և անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներին:

